

ԳԵՐԳԵՆ ՀԱՎԱԾ

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՆ

Լենինը 1913 թվին, իր «Քննադատական ակնարկներ աղգային հարցի մասին» նշանավոր աշխատության մեջ գրել է.

«Աղգային երկու կուլտուրա կա յուրաքանչյուր աղգային կուլտուրայում: Կա Պուրիշկեիչների, Դուշկոֆների և Ստրուվենների վելիկոռուսական կուլտուրա,—բայց և կա վելիկոռուսական կուլտուրա, որ բնորոշվում է Ջերնիշևսկու և Պլեխանովի ասուներով»:

Այնուհետև Լենինը նշում է, որ նույնը կարելի է ասել և բոլոր մյուս ժողովուրդների կուլտուրաների մասին:

Հետևապես՝ «միասնական աղգային կուլտուրա», «միասնական աղգային գրականություն» հասկացողությունները, ինչպես փայլուն կերպով ապացուցում է Լենինը, բուրժուական, նացիոնալիստական հասկացողություններ են:

Հայ բուրժուազիայի և հայ աշխատավոր մասսաների միջև սկսված դասակարգային պայքարը ավելի ցայտուն դարձրեց աղգային երկու կուլտուրաների գոյությունը նաև հայ իրականության մեջ:

Վահան Տերյանը հանդես եկավ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ աղգային երկու կուլտուրաների պայքարը Ռուսաստանում ընդունել էր չափազանց սուր բնույթ: Իր գրական ու հասարակական գործունեության հենց առաջին քայլերից Տերյանը պետք է որոշեր, թե ում հետ է ինքը և աղգային երկու կուլտուրաներից որին պետք է հարի: Նա կամ պետք է հարեր աղգային-բուրժուական ինտելիգենցիային, որը հայ ժողովրդի բախտը ամբողջովին կապում էր Շվրոպայի իմպերիալիստական պետությունների դիվանագիտական նենգ խաղերի հետ, կամ պրոգրեսիվ, դեմոկրատական հայ ինտելիգենցիային, որը հայ ժողովրդի ազատագրման հեռանկարները կապում էր ուստի ժողովրդի, նրա ռևոլյուցիոն պայքարի ու հաղթանակի հետ: Տերյանն իր հասարակական-քաղաքական ու գրական գործունեությամբ կանգնեց վերջինիս կողմը:

Տերյանի այս կողմնորոշումը պատահական չէր, արդյունք էր հասարակական այն միջավայրի ազդեցության, որը խոշոր դեր էր խաղացել նրա աշխարհայացքի կազմավորման գործում:

Դեռ պատանի հասակում Տերյանը մեկնում է Մոսկվա և ընդունվում է Հաղարյան ճեմարան: Ավարտելով ճեմարանը, նա շարունակում է իր ուսումը Մոսկվայի համալսարանում: Ավարտելով համալսարանի պատմագրական ֆակուլտետը, մեկնում է Պետերբուրգ, որտեղ ուսումնասիրում է արևելյան լեզուները և արևելյան ժողովուրդների կուլտուրան:

¹ В. И. Ленин, Сочинения, изд. 4-е, том 20, стр. 16.

Թե՛ Լազարյան ճեմարանում և թե՛ Մոսկվայի ու Պետերբուրգի համալսարաններում ուսանելու տարիներին Տերյանը ոչ միայն մեծ հափըշտակությամբ ուսումնասիրում էր ողու կլասիկների երկերը, հաճախում Մոսկվայի ու Պետերբուրգի նշանավոր թատրոններն ու թանգարանները, մասնակցում ողու գրողների հավաքույթներին, հասարակական անվանի գործիչների հրապարակային գասախոսություններին, այլև սերտ կապեր էր ստեղծում ողու առաջավոր մտքի լավագույն ներկայացուցիչների հետ:

Այդ տարիներից էլ ահա հայ ժողովրդի ծանր վիճակը, նրա ապագան, նրա ազատագրումը լուրջ կերպով զրազեցնում է երիտասարդ հայրենասեր Վահան Տերյանին:

Ինչպես հայտնի է, այդ տարիներին հայ ինտելիգենցիան առանձնապես մտահոգված էր Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրով: Հայ մոկրատական, պրոգրեսիվ ինտելիգենցիան, այդ հարցում վճռականորեն րախվելով բուրժուա-նացրոնալիստական ինտելիգենցիայի հետ, իր հայացքը հառել էր դեպի Ռուսաստանը, նրա մեծ ժողովրդի վերածննդի հետ կապելով հայ ժողովրդի ճակատագիրը: Դեռևս առաջին համաշխարհային պատերազմից առաջ Տերյանը Արևմտյան Հայաստանի հարցի առթիվ պարզ ու վճռականորեն հայտարարել է. «Լավագույն լուծումը այդ հարցի ևս համարում եմ ողուական արապետությունը: Եթե դա հնարավոր է՝ ուրեմն մեր ժողովրդի երկու խոշոր հատվածների միացումով ավելի ևս կզորեղանա այն կուլտուրական հոսանքը, որը փափագելի է ինձ համար, եթե չլիսի այդ, ապագայում էլ մենք պիտի ձգտենք այդ միացման: Տաճկաստանի վերածնությունը ևս չեմ հավատում, իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկրայելի է: Եվ կապիլով իմ լավագույն հույսերը առաջավոր ողու դեմոկրատիայի հույսերի և իմ րադձանքները նրա րադձանքների հետ, ևս չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»¹

Խոսելով հայ և ողու ժողովուրդների րարեկամական հարաբերության մասին, Տերյանը մատնանշում է, թե ինչպես հայ ժողովրդի լավագույն զավակները դեռ հեռավոր ժամանակներից սկսած իրենց իղձերն ու երազանքները կապել են ողու ժողովրդի ու ողու կուլտուրայի հետ: Այդ կապակցությամբ Տերյանն առանձնապես ընդգծում է Խաչատուր Աբովյանի և Հովհաննես Թումանյանի հեռատեսությունն ու երկու ժողովուրդների մերձեցման գործում նրանց մատուցած խոշոր ծառայությունները: «Աբովյանի բորբոքուն հոգին դեռ սրանից 70 տարի առաջ, եթե պարզ չէր գիտակցում, գոնե զգում էր,—ասում է Տերյանը,—թե ինչ են բերում մեզ ողուները, և ողջունում էր նրանց մուտքը մեր երկրի խորքը: Եվ մեր օրերի մեծ պոետը չէ՞ արդյոք, որ բերում է մեզ ողու հոգու ամենաբնորոշ արտադրությունները—Պուշկինը և րըլինան, Լերմոնտովը և ժողովրդական հեքիաթները»²:

Տերյանը րադմիցս նշում է, որ պիտի խստիվ տարբերել ողուական ցարիզմը, ողուական ոստիկանական կառավարությունը, ողու ժողովրդից, նրա առաջավոր, ուսուցիչոն մասսաներից: «Պետք է չափազանց կարճատես լինել գալիքի վերաբերմամբ,—ասում է Տերյանը,—կամ չափազանց վա-

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատոր 4-րդ, էջ 182:

² Նույն տեղում, էջ 179-180:

տատես Ռուսիայի ապագայի նկատմամբ, այս ամենը լոկ որ ևս մատնանշեցի ամենաընդհանուր գծերով միայն, ուստի բյուրոկրատական-արսուլուտիստ կառավարության քաղաքական գերիշխանությունից առաջընթացի մինչև համարելու համար՝

Խոսելով հայ գրականության երկու հատվածների՝ արևելահայ և արևմտահայ գրականության մասին և համեմատելով դրանց ժողովրդականությունը, հումանիզմն ու զարգացման առողջ տենդենցները, Տերյանն առաջնությունը տալիս է արևելահայ գրականությանը, նշելով, որ հազարգացել է ուստի հարուստ ու առաջավոր գրականության բարերար ազդեցության ներքո։ Որքան էլ թերի լինի ռուսահայերի գրականությունը, — ասում է Տերյանը, — նա իր մեջ առողջ զարգացման ավելի տարրեր է պարունակում, քան պոլսականը։ Որովհետև որքան էլ աննշան լինի այդ ազդեցությունը, սակայն աներկրայելի է, որ մեր գրականությունը կրել է իր վրա ռուսական պարզ ու պայծառ գրականության ազդեցությունը։ Ռուս գրականության վսեմ պարզության, սրտաբաց անկեղծության նույնիսկ ամենաթույլ ազդեցությունն ավելի ընդունակ է մեր գրականությանը կենդանություն և կենսունակություն ներշնչելու, քան այն բոլոր ծամածոությունները, որ անում են թեպետ և գուցե շնորհալի գրողներ, անվանելով այդ վերադարձ գեպի հայկական հին կրոնը, հեթանոսություն՝²

Տերյանը՝ խոշոր նշանակություն է տալիս նաև այդ գրականության լավագույն նմուշների թարգմանության գործին, գտնելով, որ այդ թարգմանությունները մեծ զարկ կտան մեր կուլտուրայի ընդհանուր զարգացմանը։

Քննադատելով Կովկասյան Հայոց Հրատարակչական Ընկերության Վարչության հրատարակչական պլանները, հատկապես թարգմանական գրականության վերաբերող մասը, Տերյանը հրատարակչության ու ընթերցող հասարակության ուշադրությունը հրավիրում է ուստի մեծ գրականության վրա՝ այն համարելով աշխարհի ամենաառաջավոր, հումանիստական ու իդեալական գրականությունը։ Տերյանը գտնում է, որ՝ «Հայ ընթերցողը պետք է ունենա իր գրադարանում հայերեն լեզվով բոլոր ռուս գրողների գրվածքները, և՛ Դոբոլի, և՛ Պուշկինի, և՛ Տոլստոյի, և՛ Ջեխովի, — գոնե նրանց «լավագույն» գրվածքների ժողովածուները, բայց, իհարկե, ոչ այնքան «խիստ» ընտրությամբ, ինչպես ժլատ Ընկերությունն է արել Տոլստոյի և Դոստոյևսկու գրվածքներից։ Իզուր են կարծում չատերը, որ այդ գլուխներն ընթերցողներ չեն ունենա»³

Տերյանն առաջարկում է ուստի կլասիկ գրականությունից առաջին հերթին թարգմանել մեծահանճար Լևի Տոլստոյի գեղարվեստական երկերը, համարելով, որ Տոլստոյի երկերի թարգմանությունը մի որևէ ժողովրդի լեզվով՝ բնորոշում է այդ ժողովրդի կուլտուրական մակարդակը։ «Լևի Տոլստոյը, — գրում է Տերյանը, — այնպիսի մի հեղինակ է, որի գրվածքների եթե ոչ իրականաբար ժողովածուն, ապա գոնե ժողովածուն, ըստ կարելույն իրականաբար ժողովածուն պետք է ունենա ամեն մի ժողովուրդ, եթե նա

¹ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատոր 4-րդ, էջ 191։

² Նույն տեղում, էջ 183։

³ Նույն տեղում, էջ 116։

կուլտուրաչան կոչվելու հավակնություն ունի։ Ուրեմն եթե մենք համարում ենք քիչ թե շատ կուլտուրական մեզ, անհրաժեշտ է մտածել այդ մասին»¹

Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպի հայերեն թարգմանության առաջին նախաձեռնությունը պատկանում է Վահան Տերյանին։ 1912 թվին «Պանթեոն» հրատարակչությունը ծրագրում է հրատարակել Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն»։ Առաջին հատորը, ըստ նախատեսված ծրագրի, պետք է թարգմաներ ինքը՝ Տերյանը, երկրորդը՝ Ստեփան Ջորյանը, երրորդը՝ Դերենիկ Դեմիրճյանը և այլն։ Թարգմանիչների հետ անհրաժեշտ բանակցություններ վարելուց հետո սկսվում են աշխատանքները, բայց առաջին համաշխարհային պատերազմը խանգարում է այդ գործի իրականացմանը։

Տերյանը հայ գրողների կողմից 1910 թվին ներկա է լինում Լեվ Տոլստոյի թաղմանը։ Ծանր տպավորություն է թողնում նրա վրա Տոլստոյի հուղարկավորությունը։ Ցարական Ռուսաստանի խալարամուկ կառավարությունը մեծ զրոգից վրեժխնդիր է լինում անգամ այն պահին, երբ նա արդեն դադարի մեջ էր գտնվում։ Նա ոչ միայն անուշադրության է մատնում մեծ զրոգի մահը, այլև հազար ու մի խոչընդոտներ է հարուցում նրա թաղման հանգիստավորությունը կանխելու համար։ Այս առթիվ Տերյանը գրում է. «Տոլստոյի թաղմանը չէր մասնակցում ամբողջ Ռուսաստանն իսկ, մինչդեռ պետք է մասնակցեր ամբողջ աշխարհը։ Հանդեսն ավելի քան սովորական էր, նման մյուս այդ տեսակ հանդեսներին, մինչդեռ Տոլստոյը միակն է և նմանը չունի... Արդյոք Տոլստոյինք ենք թաղում մենք։ Մի՞թե կարելի է այդպես թաղել Լեվ Տոլստոյին։ Ռուս գրողների, հասարակական գործիչների և գիտնականների մեծ մասը, ճշող մեծամասնությունը բացակայում էր։ Մի երկու հոգի միայն եկել էին հարգելու մեծ գրողին»²։

Տերյանը դառնացած շարունակում է. «Ես հիշեցի շատ և շատ թնդումներ—նոքա բոլորն էլ հանդիսավոր էին, քան Տոլստոյինը։ Այդ թաղման հանդեսում չգտա ես ազգային այն մեծ հանդիսավորությունը, որ պետք էր սպասել»³։

Տոլստոյի թաղման առթիվ գրած իր հոդվածներում Տերյանը բոլոր ժողովուրդների անսահման սերն է արտահայտում հանճարեղ գեղարվեստագետի ու բոլոր ժամանակների մեծ գրողի հանդեպ։

1912—1913 թվերին Վահան Տերյանը նախաձեռնում է իր խմբագրությամբ հրատարակել Լեյմոնտովի երկերի ժողովածուն երկու հատորով։ Այս ուղղությամբ նա հսկայական աշխատանք է կատարում, բայց ժամանակի ծանր պայմանները հնարավորություն չեն տալիս նրան իրագործելու այս հսյակապ նախաձեռնությունը։

Բացառիկ նշանակություն տալով թարգմանական դրականությանը, Տերյանը հսկայական աշխատանք է կատարում այդ ուղղությամբ։ Նրա կատարած թարգմանություններն իրենց բնագրերին հավասար ստեղծագործություններ են։

Տերյանը որոշում է հայ ընթերցողին ծանոթացնել ռուս և մյուս ժողովուրդների 20-րդ դարի բանաստեղծների ստեղծագործություններին։ Նա

¹ Գ. Տերյան, Երկերի ժողովածու, հատոր 4-րդ, էջ 115։

² Նույն տեղում, էջ 110։

³ Նույն տեղում, էջ 109։

ձեռնարկում է առաջին հերթին ուսու բանաստեղծների ստեղծագործությունների թարգմանությունը՝ Մտադրվելով մի շարք թարգմանություններ տալու ուսու նորագույն պոետներից, ես սկսեցի Վալերի Բրյուսովից՝ զրույց է Տերյանը 1913 թվին, նա թարգմանում ու հրապարակում է Բրյուսովի մի շարք բանաստեղծությունները, Հետագայում Բրյուսովը, ուսումնասիրելով հայ լեզուն և ծանոթանալով Տերյանի այդ թարգմանություններին, հիացել էր նրանցով։ Անհրաժեշտ է նշել, որ Տերյանի ծանոթությունը Բրյուսովի հետ վերաբերում է 1913—1914 թվերին։ Դա այն շրջանն էր, երբ Բրյուսովը դառնում է Մաքսիմ Գորկու մոտիկ աշխատակիցը՝ Ռուսաստանի մանր ժողովուրդների դրականության ժողովածուների հրատարակման գործում։ Դա ուսուցիչի վերելքի այն շրջանն էր, երբ երկու բանաստեղծներն էլ անվերադարձ կերպով իրենց հայացքները դարձրել էին ղեպի գալիքը, ղեպի ուսուցիչան։

Տերյանը բարձր է գնահատում Բրյուսովին նաև հայ կուլտուրային մատուցած նրա խոշոր ծառայությունների համար։ Իր այդ համակրանքը Բրյուսով բանաստեղծի ու գրական գործչի հանդեպ Տերյանն արտահայտել է Վալերի Բրյուսովին նվիրված բանաստեղծություններից մեկում։

Վահան Տերյանը, լիակատար ու փայլուն կերպով տիրապետելով ուսու լեզվին, մի շարք թարգմանություններ է կատարում նաև հայերենից ուսու սերեն։ Այդ թարգմանություններն արժանացել են ուսու մամուլի և զրոգների բարձր գնահատականի։ Նրանք այնքան անթերի ու հաջող են եղել, որ նույնիսկ Մաքսիմ Գորկին ծանոթանալով նրանց, ժպտալով դարձել է Տերյանին, ասելով, թե ինչու նա ուսուներեն ևս չի գրում։

Տերյանը ուսուներեն է թարգմանել Սունդուկյանի «Պեպոս»-ն, Շիրվանզադեի «Ծավազարը», Բաֆու «Կայծեր»-ի առաջին հատորը և Գորկու խորհրդով նախաձեռնել էր թարգմանելու նաև Շիրվանզադեի «Դոսոս»-ը ու ուրիշ շատ գործեր։ Այսպիսով, Տերյանը, որպես թարգմանիչ, ոչ միայն ուսու, ֆրանսիացի ու վրացի զրոգների երկերն էր թարգմանում հայերեն, այլև հայ զրոգների երկերը՝ ուսուներեն։

Հայ իրականության մեջ Տերյանը և՛ բանաստեղծ, և՛ թարգմանիչ, և՛ հրապարակախոս, և՛ գրական ու քաղաքական գործիչ էր։

1915 թվի սկզբներին Տերյանը ծանոթանում է սոցիալիստական գրականության հիմնադիր ու առաջնորդ Մաքսիմ Գորկու հետ։ Այդ ծանոթությունը և նրա հետ միացյալ աշխատանքը անձնօրնի տպավորություն ու խոշոր ազդեցություն է թողնում Տերյանի վրա։ Նրա ապագա գրական ու հասարակական գործունեության ուղին լուսավորվում է նոր իդեալներով, նրա առաջ րացվում են ստեղծագործական նոր հորիզոններ, գործունեությունն ու ասպարեզներ։

Գորկու առաջարկով Տերյանը նախաձեռնում է «Հայ գրականության ժողովածու»-ի նախապատրաստման ղեկարին աշխատանքը։ Նախնական անհրաժեշտ աշխատանքները կատարելուց հետո Տերյանը, Գորկու հրավերով, մեկնում է Ֆինլանդիա, նրա ամառանոցը։ Այնտեղ՝ Գորկու մոտ Տերյանը հանդիպում է մի շարք զրոգների, արտիստների ու բանաստեղծների։ Դրանցից մեկը, բանաստեղծ Դ. Ն. Սեմյոնովսկին, Մաքսիմ Գորկու

1 «Գեղարվեստ», 1913 թ., № 3, էջ 116։

մասին գրած իր հետաքրքրական հիշողությունների մեջ խոսում է նաև Տերյանի մասին, որին նա հանդիպել էր Ֆինլանդիայում, Գորկու ամառանոցում։ Սեմյոնովսկին պատմում է Գորկու և Տերյանի զրույցը զրականության ընդհանուր հարցերի և ապա «Հայ գրականության ժողովածու»-ի շուրջը։ Սեմյոնովսկին գրում է. «Դառնալով Տիխոնովին և Տերյանին՝ Ալեքսեյ Մաքսիմովիչը սկսեց խոսել հայ գրականության ժողովածուի հրատարակության մասին։ Սեղանի վրա երևաց թուղթ և մատիտ։ Տերյանը սկսեց թվել հայ գրողների և ուսումնասիրող-թարգմանիչների ազգանունները, որոնց կարելի էր ներգրավել ժողովածուի աշխատանքներին։ Գորկին գրի էր առնում»¹։

Գորկու մոտ՝ Մուստա-Մյակիում Տերյանը մնում է ավելի քան մի շաբաթ։ Այդ օրերն անմոռանալի էին Տերյանի համար։ Իր բազմաթիվ նամակներում նա հիացմունք է հայտնում մեծ գրողի ու քաղաքացու նկատմամբ։ Իր մի նամակում Տերյանը գրում է. «Ինքը՝ Գորկին շատ ազնիվ մարդ է և շատ սիրելի—այնքան սրտով պարզ, որ երևակայել չես կարող և միևնույն ժամանակ «—»-ը և ոչ համակրելի մարդկանց համար խիստ ու կծու։ Ինձ երեկոներին պատմում էր իր կյանքից, պատմեց մի քանի սրտաշարժ և դեղեցիկ էպիզոդ»։

Գորկին առաջարկում է «Հայ գրականության ժողովածու»-ի մեջ մտցնել Սունդուկյանի «Պեպոն» և ցանկություն է հայտնում այդ գործի թարգմանության վրա անձամբ աշխատել։ «Պեպո»-յի բառացի թարգմանությունը կատարում է Վահան Տերյանը, և երբ թարգմանությունը պատրաստ էր, Տերյանը 1915 թվի հուլիսի 21-ին, Պետրոգրադից հետևյալ նամակն է ուղարկում Մաքսիմ Գորկուն.

«Մեծարգո Ալեքսեյ Մաքսիմովիչ.

Մոտ օրերս պատրաստ կլինի Սունդուկյանի «Պեպո»-յի բառացի թարգմանությունը։ Բարի եղևք հայտնել ինձ, թե ինչպես վարվեմ։ Թարգմանությունն ուղարկեմ Ձեզ, թե՛ գամ (ինչպես պայմանավորվել էինք, եթե միայն 'բուք չեք մոռացել այդ)։ Եթե Դուք մտադիր եք այժմ ևեթ ձեռնամուխ լինել թարգմանությանը և եթե իմ ներկայությունն անհրաժեշտ կհամարեք, ես կարող եմ դալ շաբաթ օրը, հետո բերելով արդեն պատրաստ ձեռագիրը («Պեպո»-յի բառացի թարգմանության)։ Բանաստեղծներից մնում է թարգմանել մի քանի գործեր, որոնք չեն մտել նրանց բանաստեղծությունների գրքերի մեջ և ցրված են զանազան պարբերական հրատարակություններում։ Այդ գործերը կընտրեմ և կներկայացնեմ թարգմանիչներին։

Մնացած բոլորի մասին՝ ժողովածուի վերաբերյալ անձամբ կհայտնեմ Ձեզ, եթե պետք լինի գալու, կամ՝ եթե կարիք չի լինի—կսպասեմ Ալեքսանդր Նիկոլաևիչի գալուն և կտեղեկացնեմ Ձեզ։

Ձեռ անկեղծ սիրող և հարգող

Վահան Տերյան

Այս նամակը ստանալուց հետո Գորկին շուտով իր մոտ է հրավիրում Վահան Տերյանին և նրանք միասին աշխատում են Սունդուկյանի «Պեպո»-յի թարգմանության վրա։

¹ Д. М. Семеновский—А. М. Горький (письма и встречи), Москва, 1938 г. стр. 33—35.

«Հայ գրականության ժողովածուն» լույս տեսնելուց հետո էլ Տերյանը շարունակում է կապ պահպանել Դորկու հետ և ուշադիր հետևում է նրա կյանքին և դրական գործունեությանը:

Երբ 1917 թվի աշնանը լրացավ Դորկու գրական գործունեության 25-ամյակը, Տերյանը ողջույնի մի ջերմ հեռագիր ուղարկեց նրան: Ահա այդ հեռագիրը.

«Սրտանց ոգջունում եմ Ձեզ, դեմկրատիայի փառապանծ, խիզախ, հավատարիմ առաջնորդիդ, ջերմագին սիրված նշարտախօս գրողին, քաղաքացուն և մարդուն:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ»

Բր քաղաքական հայացքներով Տերյանը ամենուրեք աշխատում էր քայլել իր ժամանակի առաջավոր մարդկանց հետ, հետևում էր ուղուցիտն իրադրություններին և մեծ բանաստեղծի հեռատես աչքերով տեսավ գալիք ուղուցիտն մեծ փոթորիկների մեջ մարդկության փայլուն հեռանկարներ:

Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ուղուցիտն Վահան Տերյանը դիմավորեց անհուն խանդավառությամբ, դիմավորեց որպես բոլշևիկ և անսահման ոգևորությամբ նետեց իրեն ուղուցիտայի փոթորկի մեջ, իր ամբողջ կյանքը զոհաբերելով նրա հաղթանակի մեծ գործին:

Гурген Овнан

Ваан Терян и русская культура

Р е з ю м е

Ваан Терян—один из крупнейших армянских писателей. Еще юношей он поехал в Москву и учился в Лазаревском институте, а затем успешно окончил историко-филологический факультет Московского университета. Терян рос и воспитывался на лучших традициях русской культуры и литературы и с первых же шагов своей литературно-общественной деятельности судьбу армянского народа связал с русским народом и в победе его борьбы видел спасение армян. Ведя борьбу с армянскими националистами, которые судьбу армянского народа связывали с империалистическими государствами Европы и даже с Турцией, веря в возрождение Армении,—Терян еще до революции писал: „Я не верю в возрождение Турции, а будущее России для меня вне сомнения. Свои лучшие надежды связывая с надеждами русской передовой демократии и свои чаяния с ее чаяниями, я не сомневаюсь, что не буду разочарован“.

Говоря о развитии литературы у армян, живущих в России, и у западных (константинопольских) армян, Терян признает приоритет первых, так как литература у них развивалась под влиянием русской передовой, гуманистической литературы.—„Литература русских армян, как бы ни была неусовершенствованной,—говорит Терян,—содержит в себе больше зародышей здорового развития, чем константи-

нопольская. Каким бы незначительным ни было это влияние, но несомненно, что наша литература несла на себе влияние яркой и ясной русской литературы. Даже самое слабое влияние искренней сердечности величавой простоты русской литературы более способно вдохнуть живость и жизненность в нашу литературу, чем все те кривлянья писателей, возможно и даровитых, называвших это возвратом к древней армянской религии, к язычеству“.

Огромное значение придавал Терян делу перевода русской литературы на армянский язык, находя, что эти переводы станут большим сдвигом в общем развитии нашей культуры. — „Армянский читатель,— пишет Терян,— должен иметь в своей библиотеке все произведения русских писателей на армянском языке—и Гоголя, и Пушкина, и Толстого, и Чехова, хотя бы сборники их избранных сочинений“.

Терян предлагал перевести, в первую очередь, художественные произведения гениального русского писателя Л. Толстого. Первый почин перевода романа Толстого „Война и мир“ принадлежит Ваану Теряну.

В 1910 году на похоронах Льва Толстого от армянских писателей присутствовал Терян. В своих статьях, написанных по этому поводу, он осуждает реакционное царское правительство России за те бесчисленные препятствия, которые ставились им, чтобы помешать торжественно похоронить гениального писателя. Терян пишет: „На похоронах Толстого присутствовала даже не вся Россия, а должен был присутствовать весь мир. Процессия была более чем обыкновенной, такой, как всякая такого рода процессия, а меж тем Толстой единственный и не имеет подобных себе“.

В 1912 году Терян взялся за издание двухтомника сочинений Лермонтова на армянском языке. В этом направлении он провел огромную работу, но тяжелые условия того времени не давали ему возможности осуществить это прекрасное начинание.

В 1915 году Терян близко знакомится с основателем и вождем социалистической литературы Максимом Горьким. Это знакомство и совместная работа с ним производят на Теряна сильное влияние. Пути его будущей литературной и общественной деятельности освещаются новыми идеями, перед ним открываются новые творческие горизонты, новая арена деятельности.

По предложению Горького Ваан Терян составил „Сборник армянской литературы“, вышедший в свет в 1916 году под редакцией Максима Горького. Исключительный интерес представляет переписка Теряна с Горьким. В своей телеграмме Горькому в 1917 году, по случаю 25-летия его литературной деятельности, Терян пишет: „Сердечно приветствую Вас— славного, смелого, верного вождя демократии, горячо любимого правдивого писателя, гражданина и человека“.

По своим политическим взглядам Терян повсюду старался шагать в ряду передовых людей своего времени, следил за революционной

ситуацией и мудрыми, дальноркими глазами большого поэта—в великих бурях грядущей революции он увидел блестящие перспективы спасения человечества.

Великую Октябрьскую социалистическую революцию встретил Ваан Терян с огромным энтузиазмом; встретил, как большевик, и с беззаветным воодушевлением ринулся в ураган революции, отдав свою жизнь великому делу ее победы.